ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/12

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Սարգսյանի (պետական ռեգիստրի վկայական՝ թիվ 264.110.892133),

«ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Վ. Մնացականյանի (լիազորագիր՝ տրված 01.03.2021թ.),

Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի ներկայացուցիչ Հ. Մուշեղյանի (լիազորագիր՝ տրված 12.03.2021թ.),

քննելով Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ուղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի կողմից 03.03.2021թ. ներկայացված (04.03.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/12 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «<u>ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.03.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. 18.02.2021 թվականին տեղեկագրում (gnumner.am) հրապարակել է Անտառային կոմիտեի համար անհրաժեշտ «Ուղղաթիռի վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին» ծառայությունների ձեռքբերման թիվ ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-2/02 ծածկագրով գնանշման հարցման հայտարարության և հրավերի վերաբերյալ ծանուցումը:

1.2. Գնանշման հայտարարությունը և հրավերը հրապարակվել են armeps.am կայքում:

1.3. Թիվ ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման (այսուհետ՝ «Գնման ընթացակարգ») հայտարարության մեջ նշվել է, որ Գնման ընթացակարգը իրականացվելու է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www. armeps.am) միջոցով, հայտերը անհրաժեշտ է ներկայացնել մինչև հայտերի բացման պահը, որը պետք է տեղի ունենա հայտարարության հրապարակման օրվանից հաշված 15-րդ օրվա (մեր հաշվարկով՝ 05.03.2021 թ.) ժամը 12.00-ը: Ընտրված մասնակցին կառաջարկվի կնքել «ՈՒղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին» ծառայությունների մատուցման պայմանագիր:

1.4. Հայտարարության կից Հրավերի «Գնման առարկայի բնութագիր» բաժնում նշված է. «1.1. հանդիսանում «Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե»-ի կարիքների համար՝ «ՈՒղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին»-ի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	***Չափաբաժնի անվանումը***
1	*«ՈՒղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին»*

Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 3 հավելվածում»:

1.5. Հրավերի թիվ 6 հավելվածում ներկայացված պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածում՝ որպես «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» նշված է.

Ծառայության							
հիր ավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	60421600	Ավիաքիմիական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ավիացիոն տեխնիկա՝ ուղղաթիռ համալրված բանվորական հեղուկի ցողման սարքավորումներով (սրսկիչով), ավիացիան (ուղղաթիռի) շահագործման համար անհրաժեշտ անձնակազմ: Ավիացիոն թռիչքների կազմակերպում, թունաքիմիկատների տեղափոխում պահանջվող վայրերը և լիցքավորման սարքավորումների սպասարկում: Բանվորական հեղուկի պատրաստում և լիցքավորում ուղղաթիռ, վառելիքա-քսուքային նյութերի ապահովում: Թռիչքները կազմակերպվելու են ՀՀ Սյունիքի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում, ընդհանուր 5400 հա անտառածածկ տարածքում: *Մարզերում տարածքները ըստ անտառտնտեսություն մասնաճյուղերի կնշվի գարնանը՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:	դրամ		1	ՀՀ Սյունիքի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզ	Ծառայության մատուցումը իրականացվում է 2021թ. մայիս-հունիս ամիսների ն կախված եղանակային պայմաններից:

1.6. Գնման ընթացակարգում Պատվիրատուն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության դրույթների խախտումներ, խեղաթյուրվել է գնման գործընթացի էությունը՝ հետևաբար գնման ընթացակարգը պետք է չեղյալ հայտարարվի և հայտարարվի օրենսդրության պահանջներին համապատասխանող նոր ընթացակարգ՝ հետևյալ հիմնավորմամբ:

2.1. Տեխնիկական բնութագրից ակնհայտ է, որ Գնման ընթացակարգը նախաձեռնվել է Սյունիքի, Արագածոտնի, Կոտայի և Վայոց Ձորի մարզերում գտնվող անտառներում օդային տարածքից՝ «ավիացիայի» միջոցով քիմիական աշխատանքներ (ավիաքիմիական աշխատանքներ) կատարելու համար:

2.2. «Ավիացիա» եզրույթը իր մեջ ներառում է «օդանավերով» գործունեությունը, իսկ «օդանավ» եզրույթ վերաբերում է ինչպես «ուղղաթիռին», այնպես էլ «ինքնաթիռին» (առաջին հերթին) և օդով թռչող այլ սարքերին (տե՛ս Ավիացիայի մասին իրավական ակտերը, այդ թվում «Քաղաքացիական ավիացիայի մասին» 07.12.1944 թ. Չիկագոյի

միջազգային կոնվենցիան, «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքը, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի իրավական ակտերը):

2.3. Ավիաքիմիական աշխատանքները հնարավոր է իրականացնել ինչպես ուղղաթիռով, այնպես էլ այլ ավիացիոն տեխնիկայի, այդ թվում և հատկապես՝ ինքնաթիռի միջոցով: Ընդ որում, աշխարհում, ավիաքիմիական աշխատանքները հիմնականում իրա-կանացվում են ինքնաթիռների միջոցով, քանի որ օդանավի նշված տեսակով ծառայությունների ինքնարժեքը էականորեն ավելի ցածր է լինում քան օդանավի այլ տեսակներով (այդ թվում՝ ուղղաթիռով) կատարվող նմանատիպ աշխատանքը:

2.4. Պատվիրատուն, որպես ձեռքբերվելիք ծառայության նկարագիր, վարձակալությամբ ձեռք բերվող տեխնիկայի տեսակը նշելիս ավելի լայն՝ «օդանավ» փոխարեն նշել է «օդանավի» տեսակներից միայն մեկը՝ «ուղղաթիռը», ինչի արդյունքում հնարավոր մասնակիցների շրջանակը և մրցակցությունը արհեստականորեն և անհիմն կերպով սահմանափակվել է, քանի որ նույն աշխատանքները ավելի արդյունավետ և ավելի մատչելի գնով հնարավոր է իրականացնել «օդանավի» մեկ այլ տեսակով՝ «ինքնաթիռով»:

2.5. Տեխնիկական բնութագրում ևս ծառայությունների մատուցման համար որպես ավիացիոն տեխնիկայի տեսակ «օդանավ» եզրույթը նշելու կամ պարզապես ավիացիա բառի մոտ փակագծերում անհարկի սահմանափակումներ չնախատեսելու փոխարեն, նշել է ավիացիա և փակագծում ավելացրել «ուղղաթիռ» բառը, ինչի պարագայում սահմանափակվել է «ավիացիայի» այլ տեխնիկայով, այդ թվում՝ ինքնաթիռով, նույն ավիաքիմիական աշխատանքների իրականացումը: Ընդ որում նշված չէ, որ ընդունելի կարող է համարվել նաև ուղղաթիռին համարժեք այլ տեխնիկան:

2.6. Նման խտրական մոտեցումը և կոնկրետ ավիաքիմիական աշխատանքի համար ավիացիոն տեխնիկայի տեսակը սահմանափակելը որևէ կերպ չի բխում գնման ընթացակարգի գործառնական պահանջներից, տնտեսվարության, թափանցիկության, արդյունավետության և մրցակցության սկզբունքներից: Անհասկանալի է, թե օրինակ ինչ իրավաչափ նպատակով է Պատվիրատուն սահմանափակել գնման ընթացակարգին այն անձանց մասնակցությունը, որոնք կարող էին պահանջվող ավիաքիմիական աշխատանքները ավելի մեծ արդյունավետությամբ և ավելի մատչելի արժեքով ուղղաթիռով իրականացնելու փոխարեն իրականացնել օրինակ ինքնաթիռի միջոցով:

2.7. Բացի այդ, գնման առարկայի բնութագրում և տեխնիկական բնութագրում առկա է հակասություն:

2.8. Գնման առարկայի բնութագիր նշված է «ՈՒղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին», ինչից ակնհայտորեն բխում է, որ գնման ընթացակարգի արդյունքում Պատվիրատուն ցանկանում է ավիացիոն տեխնիկա վարձակալել և հաղթող մասնակիցը պետք է ավիացիոն տեխնիկան անձնակազմի հետ վարձակալությամբ հանձնի: Այդ դեպքում գնման առարկայի տեխնիկական բնութագրում Պատվիրատուն պետք է նշեր, թե քանի ժամ է նախատեսում շահագործել վարձակալած ավիացիոն տեխնիկան, որպեսզի մասնակիցը հնարավորություն ունենար ըստ դրա ներկայացնել գնային առաջարկը 1 թռիչքային ժամի հաշվարկով: Բնութագրում նշված է, որ ծառայությունը պետք է մատուցվի 2021թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում՝ կախված եղանակային պայմաններից: Նշված ձևակերպումից հստակ չէ, թե քանի ժամ պետք է աշխատի անձնակազմը, հնարավոր չէ հաշվարկել, թե որքան վառելիք կամ այլ նյութեր են պետք, քանի ժամ սպասարկում և կայանում է անհրաժեշտ, որքան պետք է շահագործվի տեխնիկական, 2 ամսվա ընթացքում տեխնիկան կարող է շահագործվել ինչպես հարյուրավոր ժամեր, այնպես էլ ընդամենը մի քանի ժամ՝ հետևաբար հնարավոր չէ հաշվարկել ինքնարժեքը և ներկայացնել ողջամիտ գնային առաջարկ, քանի որ կախված այդ հանգամանքներից ինքնարժեքը, որը հիմք է ընդունվում գնային առաջարկը որոշելու համար կարող է էականորեն տարբերվել:

Հանրահայտ փաստ է, որ օդանավերի (ներառյալ՝ ուղղաթիռների) վարձակալության արժեքը որոշվում է թռիչքի տևողությունից ելնելով, և եթե Պատվիրատուն պարզապես ցանկանում է օդանավ (ներառյալ՝ ուղղաթիռը) վարձակալելը, ապա պետք է տեխնիկական բնութագրում հստակ նշեր ծավալը՝ թռիչքային ժամերի քանակը: Մասնակիցներն էլ ըստ այդմ կհաշվարկեին 1 ժամվա թռիչքի ինքնարժեքը և կներկայացնեին ակնկալվող ծավալի համար գնային առաջարկը:

2.9. Չնայած գնման առարկայի բնութագրում նշված է «ՈՒղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին», այսինքն իբր ծառայությունների մատուցում, բայց տեխնիկական բնութագրերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ իրականում պետք է աշխատանքներ կատարվեն, այսինքն ըստ էության պետք է կնքվի կապալի պայմանագիր և հաղթող մասնակիցը պարտավոր է թունաքիմիկատները տեղափոխել պահանջվող վայրը, պետք է ինչ-որ բանվորական հեղուկ պատրաստվի, լիցքավորվի ուղղաթիռը, ապահովվեն վառելիքա-քսուքային նյութերը, սակայն, այդ աշխատանքների ծավալները և այլ մանրամասները նշված չեն և տեխնիկական

բնութագրից հնարավոր չէ հաշվարկել, թե ինչ ծավալի թունաքիմիկատ պետք է փոխադրվի, որքան տարածություն պետք է փոխադրվի, ինչ քանակությամբ բանվորական հեղուկ պետք է պատրաստվի, ինչ քանակությամբ վառելիքա-քսուքային նյութեր անհրաժեշտ կլինեն, որքան պետք է լիցքավորվի ուղղաթիռը և առհասարակ աշխատանքների ծավալը հայտնի չէ, չկա նաև որևէ տվյալ, որը թույլ կտա մասնակցին ինքնուրույն հաշվարկել այդ ծավալները, դրանց ինքնարժեքները, ինչի արդյունքում հնարավոր չէ հաշվարկել և ներկայացնել մրցունակ գնային առաջարկ:

2.10. Տեխնիկական բնութագրում միայն նշված է, որ ծառայության մատուցումը իրականացվում է 2021թ. մայիս-հունիս ամիսներին՝ կախված եղանակային պայմաններից, և որ թռիչքները կազմակերպվելու են ՀՀ Սյունիքի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում, ընդհանուր 5400 հա անտառածածկ տարածքում: Սակայն նշվածից հնարավոր չէ որոշել ծավալները: Օրինակ՝ ինչպես արդեն նշեցինք պարզ չէ, թե այդ 2 ամսվա ընթացքում քանի ժամ թռիչք է իրականացվելու: Նշված է, որ թռիչքը պետք է 5400 հա անտառածածկ տարածքում, սակայն պարզ չէ, թե այդ 5400 հա տարածքից որքան մակերեսով տարածքը պետք է ենթարկվի քիմիկատներով մշակման, քանի անգամ, ամբողջ 5400 հա մակերեսով տարածքը պետք է մշակվի, թե դրա մի մասը, մեկ անգամ պետք է մշակվի, թե մի քանի անգամ: Տեխնիկական բնութագրի նման ձևակերպման պարագայում, հնարավոր չէ անգամ մեկնաբանել, որ Պատվիրատուին ոչ թե անհրաժեշտ է ուղղաթիռի վարձակալություն, այլ օրինակ անհրաժեշտ է 5400 հա մակերեսով անտառապատ տարածքի ավիացիոն եղանակով թունաքիմիկատով մշակման աշխատանքների կատարում: Այդ աշխատանքների էական պահանջները և պայմանները տեխնիկական բնութագրում նշված չեն, որպեսզի օրինակ հնարավոր լիներ հաշվարկել 1 հա մակերեսի համար ըստ ներկայացված պահանջների աշխատանքների կատարման արժեքը և ներկայացնել ողջամիտ գնային առաջարկ նշված աշխատանքների 5400 հա ծավալի համար:

2.11. Ակնհայտ է, որ նշված հրավերով, նման հակասությունների, անորոշ պահանջների, գնային առաջարկի որոշման համար անհրաժեշտ ելակետային տվյալների, աշխատանքների ծավալների բացակայության պարագայում, առանց այս բողոքում բարձրացված հարցադրումների հստակ պատասխանները հրավերում նշելու հնարավոր չէ պատշաճ գնային առաջարկ ներկայացնել: Որևէ մասնակից, ով նախապես, ինչը միանշանակորեն օրենքի խախտում է, Պատվիրատուից չի ստացել փաստացի կատարման

ենթակա աշխատանքների ծավալների և այլ մանրամասների մասին տեղեկատվությունը չի կարող մասնակցել գնման ընթացակարգին և հիմնավորված, մրցունակ գնային առաջարկ ներկայացնել:

2.12. ՀՀ-ի համար 05.06.2015 թ. ուժի մեջ մտած «Պետական գնումների մասին վերանայված համաձայնագրի» 10-րդ հոդվածի համաձայն՝ «Հոդված X Տեխնիկական բնութագրեր և մրցառքի փաստաթղթեր Տեխնիկական բնութագրեր

1. Պատվիրատուն չպետք է մշակի, ընդունի կամ կիրառի որևէ տեխնիկական բնութագիր կամ սահմանի որևէ համապատասխանության գնահատման ընթացակարգ՝ միջազգային առևտրին անհարկի խոչընդոտներ ստեղծելու նպատակով կամ ազդեցությամբ:

2. Գնվելիք ապրանքների կամ համար տեխնիկական բնութագրեր սահմանելիս, պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, պետք է.

ա. սահմանի տեխնիկական բնութագրերը կատարողականի և գործառնական պահանջների առումով և ոչ թե ինժեներական կամ նկարագրական հատկանիշների առումով, և

բ. հիմնվի տեխնիկական բնութագրերի միջազգային չափանիշների վրա, եթե այդպիսիք կան, հակառակ դեպքում՝ ազգային տեխնիկական կանոնակարգերի, ընդունված ազգային չափորոշիչների կամ շինարարական նորմերի վրա:

3. Եթե տեխնիկական բնութագրերում օգտագործվում են ինժեներական կամ նկարագրական հատկանիշներ, պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, պետք է նշի, որ նա կդիտարկի համարժեք ապրանքների կամ ծառայությունների մրցութային առաջարկները, որոնք ակնհայտորեն բավարարում են գնման պահանջներին՝ ներառելով մրցառքի փաստաթղթերում այնպիսի բառեր, ինչպես՝ «կամ համարժեք» բառերը:

4. Պատվիրատուն չպետք է սահմանի այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք պահանջում կամ հղում են տալիս որոշակի նշանին կամ առևտրային անվանմանը, արտոնագրին, հեղինակային իրավունքին, դիզայնին, տեսակին, հատուկ ծագմանը, արտադրողին կամ մատակարարին, եթե միայն չկա մեկ այլ բավարար չափով ճշգրիտ կամ դյուրըմբռնելի մեթոդ գնման պահանջները նկարագրելու համար և պայմանով, որ նման դեպքերում, կազմակերպությունը ներառում է «կամ համարժեք» բառերը մրցառքի փաստաթղթերում:

5. Ցանկացած տեխնիկական բնութագրի մշակման կամ ընդունման ժամանակ պատվիրատուն չպետք է փնտրի կամ ընդունի, այնպիսի եղանակով, որը կարող է մրցակցությանը խոչընդոտող ազդեցություն ունենալ, խորհուրդ այնպիսի անձից, որը կարող է առևտրային շահ ունենալ գնումներում:

6. Առավել վստահության համար, Կողմը, այդ թվում՝ իր պատվիրատուն, կարող են սույն Հոդվածի համաձայն մշակել, ընդունել կամ կիրառել տեխնիկական բնութագրեր՝ բնական ռեսուրսների պահպանումը կամ շրջակա միջավայրի պաշտպանությունը խրախուսելու համար»:

2.13. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 17 ենթակետի համաձայն՝

«1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

....17) գնման առարկայի բնութագիր՝ գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններ

2.14. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահարկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

2.15. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

1. պարտավորեցնել Պատվիրատուին դադարեցնել և չկայացած հայտարարել թիվ ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02 ծածկագրով գնման ընթացակարգը,

2. պարտավորեցնել Պատվիրատուին հայտարարել գնման նոր ընթացակարգ՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները. չսահմանափակել ավիացիոն տեխնիկայի տեսակը և տեխնիկական բնութագրում հստակ նշել ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման ծավալը և էական այլ պայմանները, գնային առաջարկը հաշվարկելու և ներկայացնելու համար անհրաժեշտ ելակետային տվյալները

Ի լրումն վերը շարադրված բողոքի՝ 17.03.2021թ. ներկայացված բողոքի փոփոխությամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Սույնով փոփոխում ենք թիվ ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02 ծածկագրով գնման ընթացակարգով «ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի կողմից 03.03.2021 թվականին ներկայացված բողոքի խնդրամասը և խնդրում ենք՝

1. պարտավորեցնել Պատվիրատուին, գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում հրավերում, գնման առարկայում փոփոխություն կատարելու վերաբերյալ.

որպես ձեռք բերման ենթակա ծառայություն «60424120- ուղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին» փոխարեն նշել գնման նպատակին համապատասխանող ծառայությունը՝ «60441000-օդային եղանակով նյութերի ցրման ծառայություններ», գնման առարկայի բնութագրում ավիացիոն տեխնիկայի տեսակը չսահմանափակել (չնշել «ուղղաթիռ» եզրույթը, անհրաժեշտության դեպքում օգտագործել ավելի լայն «օդանավ» եզրույթը), սպառիչ նշել ձեռք բերման ենթակա ծառայությունների (առկայության դեպքում նաև ածանցյալ աշխատանքների) ծավալները, էական այլ պայմանները և դրանց ներկայացվող պահանջները,

2. պարտավորեցնել Պատվիրատուին, գնահատող հանձնաժողովին ընդունել 1-ին կետում նշված պահանջի կատարումն ապահովելու համար անհրաժեշտ համապատասխան որոշումները»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.03.2021թ. ժամը 17:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի և

ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.03.2021թ. թիվ Ե/1/206-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի 2021 թվականի փետրվարի 15-ի N06-Ա հրամանով ստեղծված գնանշման հարցման ձևով ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02 ծածկագրով մրցույթի հանձնաժողովը սույն թվականի փետրվարի 17-ի թիվ 1 որոշմամբ հաստատել է «Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի կարիքների համար «Ուղղաթիռի վարձակալություն անձնակազմի հետ միասին» ծառայության ձեռքբերման» նպատակով գնանշման հարցման հայտարարությունն ու հրավերը:

Հայտարարությունն ու հրավերը սահմանված կարգով հրապարակվել է 2021 թվականի փետրվարի 18-ին Ֆինանսների նախարարության էլեկտրոնային գնումների (www.armeps.am), (www.procurement.am) համակարգի միջոցով, ինչպես նաև Անտառային կոմիտեի (forestcommittee.am) պաշտոնական կայքում:

Մրցույթի սահմանված չափաբաժինը թվով մեկն է հետևաբար կազմակերպությունը բողոքարկել է առաջին չափաբաժինը:

Մրցույթի հայտերի բացման օրը նախատեսված է եղել հրապարակման օրվանից հաշված 15-րդ օրը՝ սույն թվականի մարտի 5-ին, ժամը 12.00-ին:

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձի N/ԲՔԱ-ԳՆ/2/3256-2021 գրությունը մուտք է եղել 2021 թվականի մարտի 5-ին, ժամը 14.37-ին:

Մրցույթի մասնակցելու հայտեր չեն ներկայացվել և գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի:

Ի պատասխան «ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի բողոքի, ներկայացվում է Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի գնումները համակարգողի և պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծողի տեսակետները և հիմնավորումները:

«ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի բողոքի՝ 1-ին կետի «Նախապատմությունը և փաստերը» բաժնի՝

1.3 կետում նշվում է՝ «...հայտերի բացման պահը, որը պետք է տեղի ունենա հայտարարության հրապարակման օրվանից հաշված 15-րդ օրվա *(մեր հաշվարկով՝ 05.03.2021թ.)* ժամը 12.00-ը»: Շեշտենք, որ Անտառային կոմիտեն մրցույթի հրավերում, որն իրականացվել է էլեկտրոնային գնումների եղանակով, հրապարակել է armeps.am, gnumner.am և forestcommittee.am կայքերում, հետևաբար արդեն իսկ հայտերի բացման օր էր սահմանվել 2021 թվականի մարտի 5-ի ժամը 12.00 և այստեղ թերացման տպավորություն ստեղծելու կամ այդ հանգամանքը լրացուցիչ ընդգծելու անհրաժեշտություն չկա:

1.4 կետում նշում է կատարվել հայտարարությանը կից հրավերի «Գնման առարկայի բնութագիր» բաժնից՝ «... «Ուղղաթիռի վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին»-ի ձեռքբերումը (այսուհետ նաև ծառայություն), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում»:

Անտառային կոմիտեն առաջնորդվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով՝ օգտվելով «գնումների միասնական անվանացանկ (CPV կոդեր)»-ից գնումների պլանում ներառել է «60421600» ծակագիրը, որի անվանումն է «Ուղղաթիռի վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին» և հետևաբար այս ծածկագրի տակ նշված անվանումը իրենից ենթադրում է մեկ չափաբաժին, այստեղ նույնպես օրենքի հետ կապված հակասություն չկա:

2.1 և 2.2 կետերը ընդամենը մեջբերում են կատարում տեխնիկական բնութագրից և մեկնաբանում են ավիացիայի մասին հասկացությունը՝ հղում կատարելով իրավական ակտերի, որոնց անդրադառնալու կարիք չկա:

2.3 կետը մեջբերում եմ «Ավիաքիմիական աշխատանքները հնարավոր է իրականացնել ինչպես ուղղաթիռով, այնպես էլ այլ ավիացիոն տեխնիկայով, այդ թվում և հատկապես՝ ինքնաթիռի միջոցով: Ընդ որում, աշխարհում, ավիաքիմիական աշխատանքները իրականացվում են ինքնաթիռների միջոցով, քանի որ օդանավի նշված տեսակով

ծառայությունների ինքնարժեքը էականորեն ավելի ցածր է լինում քան օդանավի այլ տեսակներով (այդ թվում՝ ուղղաթիռով) կատարվող նմանատիպ աշխատանքը:»

Քանի որ Հայաստանի Հանրապետությունում վերջին 25-30 տարում ավիաքիմիական աշխատանքների կատարման համար ինքնաթիռներ չեն գործարկվել՝ համապատասխան վառելանյութ չլինելու պատճառով (նշենք, որ խորհրդային տարիներին վնասատուների դեմ պայքարի ավիաքիմիական աշխատանքներն իրականացվել են (АН-2) ինքնաթիռով), անտառային վնասատուների դեմ պայքարի աշխատանքները իրականացվել են (МИ 8, МТВ-1) ուղղաթիռներով, որոնք որպես վառելանյութ՝ օգտագործում են ավիոկերոսին: Նշված ուղղաթիռների արդյունավետությունը ավելի բարձր է քան (АН-2) ինքնաթիռներինը:

Համեմատության համար նշենք, որ մեկ ժամում ուղղաթիռով՝ մեր լեռնային ռելիֆի պայմաններում, կատարվում է 180-200 հա ավիաքիմիական պայքարի աշխատանքներ, թռիչքի բարձրությունը նույն պայմաններում անտառային շերտից (ծառերի գագաթից) մինչև 10 մետր է, որն ինքնաթիռը՝ մեր լեռնային պայմաններում նման բարձրություն և արդյունավետություն չի կարող ապահովել: Ուղղաթիռով կատարվող աշխատանքների համար մասնագիտացված օդանավակայանի անհրաժեշտություն չկա, քանի որ նա կարող է թռիչքներ կատարել ցանկացած անտառամերձ բացատներից և ձորակներից, ինչը խնայում է վառելիքի և թռիչքային ժամերի ծախսը, արդյունքում մեկ ժամում կատարված աշխատանքները հա-ի հաշվարկով ավելի բարձր է քան իքնաթիռինը: Բազմամյա փորձը ցույց է տվել, որ ուղղաթիռը ունենալով մոտ մեկ հազար ութ հարյուր լիտր բանվորական հեղուկով աշխատանքի հնարավորություն, մեր լեռնային ռելիեֆի պայմաններում թռիչքների ապահովությունն ու արդյունավետությունն ավելի բարձր են, քանի որ մեկ թռիչքի ընթացքում կատարում է շուրջ 60-65 հա ցողման աշխատանքներ: Ուղղաթիռն ունի նաև կետային ցողման հնարավորություն: Նշենք, որ նշված (АН-2) ինքնաթիռի բանվորական հեղուկի տարողությունը մոտ 900 լիտր է, իսկ ուղղաթիռինը 1800 լիտր է, ուղղաթիռի (МИ 8, МТВ-1) ցողման սարքավորումները ավելի շատ տարածք են ծածկում քան (АН-2) կամ նմանատիպ ինքնաթիների ցողման սարքավորումները:

2.4 կետի վերաբերյալ մեկնաբանությունը արդեն նշված է 1.4 կետի հիմնավորման մեջ: Սակայն Անտառային կոմիտեն դեմ չի քննարկում կազմակերպել ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02 ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրի բացերը լրացնելու համար: Միևնույն ժամանակ նշենք, որ 2.5 կետերին ի պատասխան ուղղաթիռին համարժեք այլ տեխնիկա արտահայտությունը անորոշ է, քանի որ ուղղաթիռին ընդհանրական հասկացողություն է:

Տեխնիկական բնութագիրը կազմելիս թիրախ է հանդիսացել 5400 հա անտառածածկ տարածքների ավիաքիմիական աշխատանքների կատարումը՝ վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարը, այլ ոչ թե զուտ ավիացիոն տեսանկյունից թռիչքների իրականացումը: Մնացած անհրաժեշտ ինքնարժեքի հաշվարկները պետք է իրականացվի մասնակիցների կողմից հիմք ընդունելով տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները: Պետք է նշել նաև, որ նմանատիպ տեխնիկական բնութագրով տարբեր տարիներին մրցութներ են հայտարարվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի կողմից և մեկ հեկտարի հաշվարկով ծախսը սահմանվել է 6100 (վեց հազար մեկ հարյուր) ՀՀ դրամը՝ ինչը հիմք է հանդիսացել 2021 թվականի Անտարային կոմիտեի գնումների պլանում ներառելու և ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02 ծածկագրով մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմելու համար:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ մրցույթի հետ կապված՝ Անտառային կոմիտեն պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին և նույնիսկ խնդրանքով է դիմել, որպեսզի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը ժամանակավոր ուղղաթիռ տրամադրի, քանի որ Հայաստանի Հանրապետության անտառային ֆոնդը, բացի հողապաշտպան, ջրապաշտպան հատկություններից նաև ռազմավարական նշանակություն ունի:

Ամփոփելով նշենք, որ ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02 ծածկագրով մրցույթի մասնակցելու հայտեր չեն ներկայացվել և գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի: Ամեն դեպքում պետք է հայտարարվի նոր գնման ընթացակարգ և տեխնիկական բնութագրում կարող է կատարվել որոշ փոփխություններ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.03.2021թ. ժամը 17:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին ներկայացրել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից 18.01.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից 2021թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ գնումների պլանը:
2. 2021թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ գնումների պլանում ներառված գնման առարկայի՝ «ուղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին (CPV դասակարգման կոդ՝ 60421600)», ձեռքբերման նպատակով Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից հայտարարվել է «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):
3. «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը 18.02.2021թ. հրապարակվել են տեղեկագրում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի 03.03.2021թ. բողոքը և 17.03.2021թ. բողոքի փոփոխությունը՝ կից փաստաթղթերով, Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի 12.03.2021թ. թիվ Ե/1/206-21 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) ***<u>պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) <u>գնումների պլանավորում</u>.

2) **<u>գնման գործընթացի կազմակերպում</u>** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **<u>գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:</u>** Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **<u>որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է</u>:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում **<u>պատասխանատու ստորաբաժանումը՝</u>**

<u>1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝</u>

<u>ա. գնման առարկայի բնութագրերը:</u> Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ **<u>պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը՝ հերթական համարակալումով, իր կողմից հաստատվելու օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին:</u>**

Կարգի 25-րդ կետի՝ **գնումները համակարգողը գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատում է գնման հայտի կազմման համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:** Եթե արձանագրվում է անհամապատասխանություն, ապա գնման հայտը վերադարձվում է պատասխանատու ստորաբաժանմանը՝ նշելով արձանագրված անհամապատասխանությունները: Պատասխանատու ստորաբաժանումն ուղղում և երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումները համակարգողին է ներկայացնում ճշտված գնման հայտը: Արձանագրված անհամապատասխանության հետ չհամաձայնելու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում գնման հայտը վերադարձնում է գնումները համակարգողին, որն այն ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին: Զեկուցագիրն ստանալու օրը **<u>պատվիրատուի ղեկավարը</u>**՝

1) հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը երկու աշխատանքային օրվա ընթացքում տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական

ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր.

2) իրավական եզրակացությունն ստանալուց հետո **<u>հանձնարարում է՝</u>**

<u>ա. գնումները համակարգողին՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպել՝ հիմք ընդունելով ներկայացված գնման հայտը</u>, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ

բ. պատասխանատու ստորաբաժանմանը, ըստ իրավական եզրակացության, վերանայել գնման հայտը:

Կարգի 26-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով **սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում <u>գնումների համակարգողը</u> կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի <u>հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը</u>**, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: <u>Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝</u>**

1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.

<u>2) հրավերի տեքստը</u>.:

Այսպես՝ Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից 18.01.2021թ. տեղեկագրում հրապարակվել է Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից 2021թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ գնումների պլանը:

2021թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ գնումների պլանում ներառված գնման առարկայի՝ «ուղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին (CPV դասակարգման կոդ՝ 60421600)», ձեռքբերման նպատակով Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի կողմից հայտարարվել է «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը 18.02.2021թ. հրապարակվել են տեղեկագրում:

Այսպիսով՝ Պատվիրատուի կողմից իր կարիքներին համապատասխան կազմված և հրապարակված 2021թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ գնումների պլանում ներառվել է «ուղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին (CPV դասակարգման կոդ՝ 60421600)» գնման առարկան, որի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի համաձայն՝ նույնպես գնման առարկա է հանդիսանում «ուղղաթիռների վարձակալություն՝ անձնակազմի հետ միասին (CPV դասակարգման կոդ՝ 60421600)»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Մինույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ, այն է՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված գնումների պլանի առկայությունն է, գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը, այնուհետև պատվիրատուի ղեկավարը հանձնարարում է գնումները համակարգողին պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպել՝ հիմք ընդունելով ներկայացված գնման հայտը, գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը

հաստատում է հրավերի տեքստը, այսինքն՝ ընթացակարգի հրավերը կարող է կազմվել միայն արդեն իսկ հաստատված գնումների պլանում ներառված գնման առարկաների մասով, հետևաբար գտնում եմ, որ Պատվիրատուն հրավերը կազմել է ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն և իր կարիքին համապատասխան:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ **ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն օժտված չէ այնպիսի լիազորությամբ, որը թույլ կտար վերջինիս պարտավորեցնել հրավերում կատարել փոփոխություն՝ ներառելով մի գնման առարկա, որը ներառված չէ Պատվիրատուի կողմից հաստատված՝ իր կարիքին համապատասխան գնումների պլանում, և տալ գնահատական՝ արդյո՞ք Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերում ներառված գնման առարկան և դրա համար սահմանված տեխնիկական պահանջները համապատասխանում են Պատվիրատուի կարիքին, թե ոչ:**

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի 03.03.2021թ. բողոքը և 17.03.2021թ. բողոքի փոփոխությունը՝ կից փաստաթղթերով, Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի 12.03.2021թ. թիվ Ե/1/206-21 գրությամբ հայտնած դիրքորոշումը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից 2021թ. կարիքների համար հաստատված գնումների պլանը և Ընթացակարգի հրավերը՝ գտնում եմ, որ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԳԼԱՅԴ ԱԴՎԵՆՉՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**